Արձանագրություն N 2

ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար նույնականացման քարտ /ID/ կարդացող սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՆՔ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

29 նոյեմբերի 2022թ.
ժամը՝ 11:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ս. Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Սմարթ քարտեր կարդացող սարքեր	800 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.11.2022թ.-ին ժամը 11:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 28.11.2022թ.-ին ժամը 11:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00454717, ՀՀ, ք Երևան, Տիգրան Մեծ 29ա, բն. 37 alfaetalonam@gmail.com, հեռ. 098 400 559

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՆՔ-22/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/ հ	Մասնակիցների անվանումներ	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Ալֆա-Էտալոն ՍՊԸ	800 000	650 000	20 %	780 000	650 000	20 %	780 000

Աճուրդն ամփոփվել է 28.11.2022թ-ին և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ն:
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց որ
Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ալֆա-Էտալոն » ՍՊԸ-ի հայտում առկա չեն անհամապատասխանություններ:

Հանձնաժողովը որոշեց՝

«Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

8.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով անգործության ժամկետ չի կիրառվում:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գագիկ Արշակյան

անդամներ՝ _____ Վահագն Մկրտչյան

_____ Վահրամ Անդրեասյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան